գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու վերաբերյալ որոշման կայացման համար, հետևաբար՝ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում վերաքննիչ բողոքի նաև այս փաստարկները:

Ամփոփելով վերոգրյալը, և հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ներկայացված վերաքննիչ բողոքում նշված փաստարկները դատական սխալի մասին հիմնավորված են, իսկ վերաքննիչ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկներն անհիմն և գտնում է, որ սույն գործով վեճի առարկա գույքը հայցվորի կողմից տիրապետելու բարեխղճության պայմանը ապացուցված համարելով Դատարանը թույլ է տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտում, ուստի վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքերը առկա են, հետևաբար վերաքննիչ բողոքը ենթակա են բավարարման, որպիսի պայմաններում կիրառման է ենթակա Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ Դատարանի 06.10.2023թ. վճիռը բեկանելու և փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի լիազորությունը՝ հաշվի առնելով, որ Դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան:

Տվյալ դեպքում, գործով այլ դատական ծախսերի բռնագանձման պահանջ չի ներկայացվել, բողոքաբերը նախապես վճարել է վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի գումարը, հետևաբար բողոքի բավարարման հետևանքով դատական ակտի բեկանման և փոփոխման՝ հայցի մերժման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ից հօգուտ Երևան համայնքի պետք է բռնագանձել 75,000.00 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ինչ վերաբերում է Դատարանում պետական տուրքի հարցին, ապա բողոքի բավարարման հետևանքով դատական ակտի բեկանման և փոփոխման՝ հայցի մերժման պայմաններում դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ և 387-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երևան համայնքի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ **ԵԴ2/25965/02/23** քաղաքացիական գործով 06.10.2023թ. վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ.

1) ««Ֆոտոն» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի համայնքի՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու մասին Երևանի քաղաքապետարանի 26.07.2023թ. կայացված 2202-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժել:

2) Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:»:

2. «Ֆոտոն» ՍՊԸ-ից հօգուտ Երևան համայնքի բռնագանձել 75,000.00 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար :

Սույն որոշումը կատարում պահանջող մասով կամովին չկատարվելու դեպքում կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ
Դ.ՍԵՐՈԲՅԱՆ	Ն.ԲԱՐՍԵՂՅԱՆ	Ի.ԲԱՂՄԱՆՅԱՆ

Սույն որոշումը մտել է օրինական ուժի մեջ

Նախագահող դատավոր՝ ---------- Դ.Սերոբյան